•ՊՕԱՊԻՍԿԱ•

ԿԱՆԷ

1998 Թ.
25 ՄԱՐՏԻ,
ՇԱԲԱԹ
ԹԻՎ 12 (5751)



ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ

ՈՐ ԿԴԱՌՆԱ ՀՀ ԵՐԿՐՈՐԴ ՆԱԽԱԳԱՀ

Կիմանանք մարտի 30-ին

ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Երեւանի քաղաքապետարանի աշխատակից ՁԱՐՈՒՀԻ ՄԽԻԿՅԱՆՆ իր անձնական գրադարանի լավագույն նմուշները նվիրեց Շուշիի մանկական գրադարանին:

- «Կանչի» հայրենանվեր նախաձեռնությունն ինձ էլ ոգեւորեց: Անկեղծ ասած որոշել էի վաճառքի հանել այս գրքերը, բայց մի տեսակ ափսոսում էի, անընդհատ ծգում: Այսօր, արդեն առանց ափսոսանքի, մեծագույն սիրով Շուշիի նորաստեղծ մանկական գրադարանին եմ նվիրում իմ անձնական գրադարանի լավագույն նմուշները, այդ թվում՝ Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆԻ «Կապիտանի աղջիկը», Եվգենի Օնեգինը», ՕՍՏՐՈՎՍԿՈՒ պիեսները, ՉԵԽՈՎԻ՝ «Ավագ այգեպանի զրույցը» պատմվածքների ժողովածուն, ՄԻՇԵԼ ՄՈՆՏԵՆԻ «Արժանավայել ապրելու մասին» փիլիսոփայական ակնարկը, ՀԵՆՐԻԿ ՍԵՆԿԵՎԻՉԻ «Առանց դավանանքի» վեպը, ՉԱՐԼԻ ՉԱՊԼԻՆԻ «Իմ կենսագրությունը», Գր. Զոհրապի, Նար-Դոսի, Վահան Թոթովենցի պատմվածքների ժողովածուները՝ շուրջ 17 անուն գիրք:

***

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի տպարանի գրաշար Էմմա Մինասյանը սիրով իր գրքերի երկրորդ խմբաքանակը՝ 20 գիրք, նվիրեց Շուշիի մանկական գրադարանին, որոնց թվում «Ժամանակակիցները Ալ. Սպենդիարյանի մասին», Եվգինե Սեբարի «Հարազատ անուններ», Ալեքսանդր Թեւոսյանի «Նահապետ Ռուսինյանի աշխարհայացքը», Միլոսլավ Ստինգլի «Սեւ կղզիներ» գրքերը:

ՄԱՐՏԻ 16-Ի ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

Անցած շաբաթվա ամենադիսլուկ կատակը կարելի է համարել հետեւյալը. ժողովուրդը առաջին ընթերցմամբ նախագահ չընտրեց: Ուղարկեցին լրամշակման՝ հաշվի առնելով եղած դիտողություններն ու առաջարկությունները:

Լիանա ՉԻՉԱԿՅԱՆ

Չնայած հայ կոմունիստները դիմեցին նույնիսկ անթույլատրելի միջոցի՝ Մոսկվայից «լավ տղերք»բերեցին մեզ վրա (Սելեզնյով, Զյուգանով), բայց դա էլ չօգնեց:

Համլիկ ՄԵՒՈՅԱՆ

Չի կարելի ասել՝ նախագահի ընտրության արդյունքներով 12 թեկնածուների մեջ Աշոտ Բլեյանը գրավել է 12-րդ տեղը: Պետք է ասել՝ վերջին տեղը:

Պավել ՂՈՒԿԱՍՅԱՆ



Լավ է, որ ժողովուրդը, այնուամենայնիվ, տրամադրված էր ոչ թե փրկիչ, այլ՝ նախագահ ընտրել, ուրեմն նաեւ հեռու չէ այն ժամանակը, երբ նախագահը կգիտակցի, որ ինքը ժողովրդի ծառան է, ոչ թե ...

Արամայիս ՍԱԼՈՅԱՆ

Մարտի 16-ի նախօրյակին եւ նաեւ այս օրերին ՀՅԴ պահվածքը արդեն իսկ հաղթող կուսակցության պահվածք է:

Մի՞թե:

Հմայակ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Երեւում է՝ իզուր Լեզվի պետական տեսչությունը ընտրությունների նախօրյակին «Հայաստանի Հանրապետություն» թերթի միջոցով դիմեց մեզ՝ օգտագործել ընտրությունների հետ կապված հասկացությունների հայերեն համարժեքները:

Թե՛ ընտրվողները եւ թե՛ ընտրողները շարունակում էին օգտագործել օտար բառեր՝ լեգիտիմ, էլեկտորատ եւ այլն ... Ինչու՞: Մի՞թե մեր լեզուները չեն պտտվում արտաբերել ավելի բարեհունչ հայերեն բառեր՝ օրինական, ընտրազանգված եւ այլն:

Արեգնազ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ



«ԿԱՆՉ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆՇՎԵՑ ՎԱՐԴԳԵՍ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 65-ԱՄՅԱԿԸ

ԿԱՐԴԱ 3-ՐԴ ԷՋՈՒՄ

ԵԳԻՊՏՈՍԻ ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱՊԵՏ, ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ՀԱՄԲԱՎ ՎԱՅԵԼՈՂ ԴԻՎԱՆԱԳԵՏ, ՀԱՅԱՉԳԻ ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱՆ ԹՈՂՎԱԾ Է Ալեքսանդրիայի Հայոց եկեղեցու բակում: Մաշարջանի վրա փորագրված է նրա նշանաբանը.

«ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆՆ Է ՀԻՄՔԸ ԱՄԵՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ»:

© National Library of Armenia OCR by Portmind

ԿԱՆՉԻՄ ԼՐԱՏՈՒ

100 ՀԱԶԱՐ ԴՈԼԱՐ՝ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅԿԱԳՈՒՄԱՐԻՆ

ԱՄՆ-ում բնակվող գործարար բարերար, Սուրեն Ֆեսճյանը 100 հազար դոլար է նվիրել ԱՄՆ-ում հայ եկեղեցու ստեղծման 100- ամյակի առթիվ հիմնադրված հատկագումարին, որի շահատոկոսից ստացված գումարները բաժանվելու են Ամերիկայի եւ Հայաստանի հայ եկեղեցիներին՝ հայ եկեղեցու երաշխավորող երիտասարդական եւ կրթական բազմազան ծրագրեր իրականացնելու համար:

Իր բարեգործական աշխատանքների համար Սուրեն Ֆեսճյանը երջանկահիշատակ Ամենայն Հայոց Վազգեն Ա կաթողիկոսի կողմից պարգեւատրվել է « Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» մեդալով, գրում է «Արմինիըն միրոր սեպտեմբեր» շաբաթաթերթը:

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ՝ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍՈՒՄ

Լոս Անջելեսում ստեղծվել է Երեւանում գործող Հայ գրականության բարեկամների միության բաժանմունք եւ հիմնադրամ, որի նպատակներից մեկը Հայաստանի միության հրատարակչական աշխատանքները ֆինանսավորելն է:

ՀՈԼԻՎՈՒԴՈՒՄ ԿԱՅԱՆԱԼՈՒ Է ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼՄԵՐԻ ՓԱՌԱՏՈՆ

Հոլիվուդում կայանալու է հայկական ֆիլմերի փառատոն, իսկ « Հայֆիլմի» տնօրեն Գեւորգ Գեւորգյանը ծրագրել է այնտեղ արտադրել եւ վաճառքի հանել հայկական ֆիլմերի բարձր որակի տեսաերիզներ՝ մատչելի գներով:

ԺԱՆ ՋՈՐԿԱԵՖԸ ՀԱՅՏՆՈՒՄ Է, ՈՐ ՅՈՒՐԻՆ ՈՒԶՈՒՄ Է ԱՅՑԵԼԵԼ ՀԱՅԱՍՏԱՆ

Ֆրանսիայի ֆուտբոլի հավաքականի նախկին անդամ Ժան Զորկաեֆը, որը ներկայիս հավաքականի խաղացող Յուրի Զորկաեֆի հայրն է եւ համարվում է Հայաստանի հավաքականի ապագա մարզիչների հավանական թեկնածուներից, ֆրանսահայ թերթերի հետ ունեցած հարցազրույցներում պատմել է,թե ինչու է ուզում աշխատել Հայաստանում:

Ազգությամբ ոչ հայ այդ նախկին մարզիկն ասաց, որ իրեն մղել է այն հանգամանքով, որ իր կինը ազգությամբ հայ է, եւ ինքը իր կնոջ շնորհիվ է հարգանքով լցվել Հայաստանի ու հայ ժողովրդի հանդեպ: «Յուրին ուզում է անպայման լինել Հայաստանում, միայն պիտի կարողանա հարմար ժամանակ գտնել»,- ասել է հայրը:

Վանիկ ՍԱՆԹՐՅԱՆ

Դարձյալ ՌՈՄԱՆՍԱՐ



Լուս. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՁԱՆԻԿՅԱՆ

Մենք վախեցած ազգ են: Ավելի ճիշտ՝ եղել ենք: Ես այդ բանը մանկուց եմ զգացել, մանավանդ որ մեծացել եմ հայրենադարձների միջավայրում: Մեր թաղում մի ծերունի կար, որը դուռը միշտ կողպած էր պահում, ետեւը կացին դնում, որ հենց թուրքերը ներս խուժեն պաշտպանվի, մի ուրիշը հագուստներով էր քնում, որ երբ գիշերով գան, իրեն Սիբիր աքսորեն, պատրաստ լինի, երրորդը բարձի, վերմակի տակ, բոլոր թաքուն անկյուններում չորացած հաց էր շարում, որ եթե հանկարծ քաղց սկսվի, սովամահության չմատնվի:

Մեր սերունդը, չնայած նախճիր, բռնագաղթ, անոթություն չէր տեսել, ի վերջո Արցախն ազատագրել, Հայաստանի անկախությունն էր նվաճել, վախի բարդույթից չէր կարողանում ձերբազատվել: Ավելին մենք մեր հաղթանակին չէինք հավատում, մեր հաղթանակից երկնչում, մի տեսակ քաշվում էինք: Ժամանակ պետք եղավ, որպեսզի ոչ միայն բեմերից ու խնջույքներում հայտարարենք, այլեւ համոզվենք, որ որպես ազգ կարող ենք նաեւ կռվել, թշնամուն ջախջախել, իրականացնել մեր դարավոր, նվիրական նպատակները:

Ֆրանսիացի հոգեվերլուծող Հելեն Փիրալանը, վերջին տարիներին պարբերաբար Հայաստան, Արցախ այցելելուց հետո, մի ամբողջ գիրք գրեց, ուր մասնավորապես նշեց. «Ի վերջո հայը հաղթահարել է հավերժական զոհի, գութ, խղճահարություն աղերսողի հոգեվիճակը: Նա սկսել է հավատալ իր ուժին»: Ես գլուխ եմ խոնարհում Եռաբլուրի մեր երանելի նահատակների հիշատակի առջեւ նաեւ այն բանի համար, որ նրանց անհամեմատ զորեղ ոսոխի դեմ մղած ազատագրական մարտերը մեզ ձերբազատեցին գորշ ստվերի պես հետամտող երկյուղի մղձավանջից, մենք սկսեցինք ոգու զորությանն ապավինել ու հաղթեցինք: Ամենակարեւորը համոզվեցինք, որ մեր ազգային նկարագրում, ճակատագրում մի էական բան փոխվել է, փոխվել է մեկընդմիշտ: Իհարկե, դա չի նշանակում, որ ապագայում, թերեւս մոտ ապագայում, անողոք ճակատամարտեր, անգամ պարտություններ չեն լինելու, բայց նշանակալից է, որ մենք նոր՝ քսանմեկերորդ դար ենք մտնելու որպես հաղթանակած ազգ՝ հաղթողի՝ արժանապատվությամբ ու ինքնավստահությամբ: Իսկ դա չափազանց կարեւոր է: Հավատացեք՝ ամենակարեւորը:

ՆԱՄԱԿՆԵՐ, ՆԱՄԱԿՆԵՐ...

Վերջին մեկ շաբաթվա ընթացքում Հայաստանի տարբեր մարզերի դպրոցականներ նամակներ են գրել « Կանչին»: Ի՞նչն է հատկանշական: Նամակների 9/10 մասը թերթում առաջադրված մրցույթների արձագանքներն են: Տաշիրցի Նարեկ Սիմիկյանը,ստեփանավանցի Սյուզի Մաղաքյանը, գորիսեցի Աշխեն Ղարագյոզյանը, հրազդանցի Սոս Պետրոսյանը, արարատցի Աննա Ղանդիլյանը լուծել են «Կանչում» տպագրված տարբեր ժամանցներն ու շախմատային խնդիրները:

Ստացված նամակների հիման վրա խմբագրությունը լրացուցիչ մրցանակ է շնորհում (1000 դրամ) Աշխեն Ղարագյոզյանին(Գորիս):

Իսկ ահա Վեդիի թիվ 1 դպրոցի աշակերտուհի Մերի Գրիգորյանի նամակը հրապարակում ենք ամբողջությամբ:

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՍՔ ՉԷ, ԳՈՐԾ Է

Իմ ժողովուրդը բազում հայրենանվեր գործերի հեղինակ է: Հիշու՞մ եք« Ազգային տուրքի հեռուստամարաթոնը»: Իմ, եւ ոչ միայն իմ, հոգում արթնացրեց հպարտության, հայրենասիրության մի նոր ալիք, որն ամբողջովին շաղախված էր հուզմունքով: Ամեն պահ, երբ ես կարդում էի հեռուստաէկրանի վրա որեւէ մեկի անուն- ազգանունը, մտովի ավելացնում էի նաեւ իմը, նաեւ հարազատներինս: Մի անսովոր զգացում մինչեւ կեսգիշեր ուղեկցում էր ինձ: Ու ես մտուրումս քանի՞- քանի՞ երախտիքի խոսք եմ շշնջացել նրանց հասցեին, ովքեր արձագանքում էին հայրենիքի կոչին:

Եվ ինչ լա՞վ է, որ մեր ժողովուրդը իր բազում հոգսերի մեջ դեռ կարողանում է իրեն մարդ զգալ, մասնակից զգալ հայոց ավերակված հողի վերանկառուցմանը: Եվ ամեն անգամ, երբ հաղորդավարների շուրթերից հնչում էր զոհված ազատամարտիկների հասցեին ասված որեւէ խոսք, ես կարծես տխրում էի մի պահ,բայց նորից հավատի լույսը պայծառանում էր իմ մեջ: Այդպես ամբողջ օրը մերթ տխրության, մերթ ուրախության ու բերկրանքի, մերթ հպարտության ու լավատեսության շունչը պարուրում էր ինձ: Ու, չգիտես ինչու, մտքումս շարունակ ծնվում էր կոմս Մոնտե Քրիստոյի վերջին խոսքը՝ սպասել եւ հուսալ: Հուսալ, որ ամեն վիշտ իր ապաքինման ընթացքն ունի, ամեն բարի գործ պսակվում է հաղթանակով: Բարի երթ սկսված բոլոր հայրենանվեր գործերին: Հայ ժողովուրդը հավատ ունի, անկոտրում հավատ, եւ, հանուն հայ ժողովրդի գոյատեւման, մեր անցնելիք ճամփան որքան էլ կեռմաններով, որքան էլ դժվարին, բայց եւ հաստատուն է...

Մերի ԳՐԻԳՈՐՅԱՆ
Արարատի մարզ, Վեդի, թիվ 1 դպրոց, 9- րդ դասարան

© National Library of Armenia



«ԿԱՆՉ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆՇՎԵՑ ՎԱՐԴԳԵՍ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 65- ԱՄՅԱԿԸ

Նա 60 տարի էլ չապրեց երկրի վրա, աշխարհին հրաժեշտ տվեց 60-ի մատույցներում, եւ ոչ թե այդքան շուտ գնաց այն բանի համար, որ չէր կամենում ապրել, այլ որովհետեւ ժամանակն ու մարդիկ այնքան էլ գթասիրտ ու մարդավարի չգտնվեցին

Նրա նկատմամբ, երբ ապրում էր, աշխատում, իր սրտի կրակը տալիս մարդկանց, իր ազնիվ ընտանիքին, իր զավակներին ու թոռներին:

Այսօր մեր խոսքը մի մարդու մասին է լինելու, բարի գործերի մասին մի մարդու, որն իր կյանքը կապել էր պատանիների ու երիտասարդության հետ, որն խնկական ուսուցիչ է եղել, բարի, օգտաշատ խրատներով, իմաստավորված խոսքերով է լույս տարել մարդկանց:

Այո, որտեղ գնացել է Վարդգես Քալանթարյանը, այնտեղ լույս է արարվել: Ուսուցիչը միայն լույս տանողի խաչ ունի իր ուսերին:

Ուսուցիչ: Առաջին ուսուցիչը Մեսրոպ Մաշտոցն էր:

Հետո եղան բազում ուսուցիչներ: Նրանցից մեկն էր հանրապետության վաստակավոր ուսուցիչ Վարդգես Քալանթարյանը:

Այդ ուսուցչությունից 16 երկարաշարան տարիները (1965- 1981) նա անցկացրեց « Պիոներ կանչ» թերթի խմբագրությունում՝ լինելով նրա գլխավոր խմբագիրը: Եւ մեծերի, եւ մանուկների համար ուրախալի էին այդ տարիները, երբ հայտնվում էին խմբագրությունում, Վարդգես Քալանթարյանի առանձնասենյակում, որովհետեւ նրա հետ ունեցած զրույցներից էին ծնվում լավ գաղափարներ, որոնք իրականություն էին դառնում դրանից հետո: Քալանթարյանի խորհուրդներից շատ լավ գրքեր են



ծնվել՝ ուրախություն պարգեւելով ընթերցողներին: Ինքն է գրքեր գրել երեխաների համար, ջահելների համար՝ կարդացվող, հետաքրքրական գրքեր:

Լրագրողների բարեկամն էր, նաեւ՝ գրողների, մանավանդ այն տարիներին, երբ վերեւների բնահանությամբ նշանակվեց գրքի առեւտրի վարչության պետ: « Հրատարակիչ եմ ուզում լինել, գրքի հրատարակիչ, այդ ոչ թե գրքի առեւտրական»,- մի անգամ դժգոհեց նա: Ու իրականացավ նրա երազանքը, մեծ մաքառումներով ստեղծեց մանուկների ու պատանիների համար գրքի մի լավ հրատարակչություն՝ իր համախոհի՝ Գեւորգ Դեփիկյանի հետ, դառնալով նրա առաջին տնօրենը: Դա « Արեւիկ» հրատարակչությունն էր:

Վարդգես Քալանթարյանն իր մանկությունը փոխանցեց շատերին, որոնց մի մասը մարտի 13- ին, նրա ծննդյան 65- ամյակի նախօրյակին (ծնվել է մարտի 18- ին), հավաքվեց « Կանչ» (նախկին « Պիոներ կանչ») թերթի խմբագրությունում եւ նշեց նրա հոբելյանը:

Տավուշ երկրի զավակի մասին ջերմ խոսք ասացին նրա համախոհ ընկերներն ու աշակերտները՝ «Կանչ» թերթի գլխավոր խմբագիր Հմայակ Պետրոսյանը, բանաստեղծ Սուրեն Մուրադյանը, արձակագիր Լյուդվիգ Կարապետյանը, լրագրողներ Ալբերտ Փարսադանյանը, Վանիկ Սանթրյանը, Սամվել Կարապետյանը եւ ուրիշներ:

Հանդիպմանը հրավիրվել էր Վարդգես Քալանթարյանի ընտանիքը՝ նրա այրի Կիմա Վարդազարյանի գլխավորությամբ: Եւ Վարդազարյանը, եւ Քալանթարյանի դուստրը, փեսան ու թոռնուհին շնորհակալության զգացումներ հայտնեցին թերթի խմբագրությանը, Վարդգես Քալանթարյանի մյուս ընկերներին՝ այդ հանդիպումը կազմակերպելու, նրա հիշատակին ջերմ, անկեղծ խոսքեր ասելու համար: Մի- մի գավաթ գինով բոլորը խմեցին Վարդգես Քալանթարյանի կենացը, եւ ինչպես Հմայակ Պետրոսյանն ասաց, այսօր էլ կարծես Վարդգես Քալանթարյանը մեզ հետ է, կարծես այսօր էլ նա խմբագրում է « Պիոներ կանչ» թերթը՝ իր բարությունն ու սերը այսօր էլ բաժանելով աշխատակիցներին, հարազատներին, մարդկանց ու աշխարհին:

Այո, այդպես է, եւ դրա համար է, որ այսօր չի կորել նրա աշխատանքը, նրա գործը շարունակում են նրա աշակերտները, նրա ընկերները, նրա բարեկամները:

Վանիկ ՍԱՆԹՐՅԱՆ

ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆ -120

ԵՐԿՈՒ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՀԱՄԵՐԳՆԵՐԻՑ

1. ԵՐԳԻՉ Ա. ՇԱՀ- ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԿՈՆՑԵՐՏԸ

Երգիչ Ա. Շահ-Մուրադյանը հանդես եկավ Թիֆլիսի հասարակության առաջ հատուկ կոնցերտով, որը տրվեց հինգշաբթի օր, մարտի 7-ին, Թիֆլիսի Արտիստական ընկերության դահլիճում: Համերգի թողած տպավորությունը նպաստավոր էր երգչի համար: Շահ-Մուրադյանը ունեցավ հաջողություն եւ շահեց ոգեւորված ծափահարություններ: Հաճույքով արձանագրում ենք, որ Շահ-Մուրադյան ունի ախորժելի տեմբրով, մաքուր ինչմամբ տենորային գեղեցիկ մի ձայն, որը գրավիչ է հանդիսականի համար: Երգչի ձայնը մշակված է եւ եվրոպական երաժշտության ընտելացած: Շահ-Մուրադյանը երգում է ճաշակով ու զգացմունքով: Նա սկսեց իր կոնցերտը Բիզեի «Մարգարիտ որսորդներ» օպերայից վերցրած մի արիայով, որը սկզբից իսկ ստեղծեց նպաստավոր տրամադրություն երգչի համար:

Մենք՝ շատ հավանեցինք Շահ-Մուրադյանի երգածը թե Դոնեցետիի «Ունաֆուրդիվա Լագրինա» եւ թե Բենլերգի «Հնդկական երգ» գեղեցիկ ստեղծագործությունների կատարումները: Վերջինս երգվեց ջութակի եւ դաշնամուրի ներդաշնակությամբ:

Շահ-Մուրադյանը երգեցողության ընթացքում ունի բեմական շնչառություն, ընդունակ է ախորժալուր պիանոյով երգել ամբողջ տողեր եւ հնչեցնել ուժեղ, զիլ ձայն: Շահ-Մուրադյանի ձայնը մի գնահատելի գանձ է, որի հանդես գալը արձանագրում ենք իբրեւ ուրախալի երեւույթ:

«ՄՇԱԿ» , 1913Թ.

2. ՇԱՀ-ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԵՐԳԱՀԱՆԴԵՍԸ

Անցյալ հինգշաբթի գիշեր «ժուռնալի» սրահին մեջ, մասնակցությամբ օտար ծանոթ արվեստագետներու, տեղի ունեցավ տաղանդավոր երգիչ Ա. Շահ-Մուրադյանի երգահանդեսը: Փարիզահայ գաղութը իր բոլոր խավերով ներկա էր այդ երեկո: Հարուստ դասին քով ակնահայտի կը տեսնվեր նույնպես աշխատավոր դասը, որ հետեւյալ առտու կանուխ ելլելու տաժանելի մտավախությունը արհամարհելով, եկած էր լսելու ժողովրդին երգիչը, ապացույց տալով այդպեսով իր գեղարվեստական ճաշակին:

Շահ-Մուրադյան երգեց շատ մը կտորներ՝ եվրոպական եւ առհասարակ հայկական: Ի միջիայլոց երգեց իտալերեն («Գարո Միո Բեն» Ջորդանիի), ֆրանսերեն («Արիոզո» Լիո Դելիբեսի) եւ («Շանթ Հինդու» Դ. Բենբերգի), մեջ Շահ-Մուրադյանը ի հայտ եկավ իր արվեստի բովանդակ նրբությամբ:

Հայերեն երգերը զմայլելի էին: Շահ-Մուրադյանը ծնած է հայ երգին համար:

Եկմալյանի, Կոմիտասի, Ռ. Մելիքյանի եւ Գ. Սյունիի գործերը Շահ-Մուրադյանը երգեց ինքնահատուկ եւ հարազատ ոգիով:

Տարոնի Պլպուլը ներկաներուն փոխադրեց Արագածի լանջերը, մերթ այդ լանջերեն վար իջեցնելով, տարավ նետեց զանոնք աշնան եղանակեն զարնված դաշտին մեջ:

Դյութիչ, հմայիչ էր Կանայանի «Օրորը» , որ Շահ-Մուրադյանը երգեց ջութակի եւ դաշնամուրի ընկերակցությամբ: Յուրաքանչյուր բառ, յուրաքանչյուր ձայնանիշ Շահ-Մուրադյանի բերնեն դուրս կելլեին այնքան նուրբ ու այնքան քնքուշ, որ այդ երգը վայրկյան մը շաղախվեցավ ժողովրդի հոգիին հետ: Այդ երգեն չուզեց բաժանվիլ ունկնդիրը, ու բուռն ծափերու տարափին տակ Շահ-Մուրադյանը կրկնեց զայն:

Կոմիտաս «Մոկաց-Միրզեն» երգին մեջ Շահ-Մուրադյանը գլեց անցավ ամեն ինչ: Տարաբախտ վարդապետին շունչը Շահ-Մուրադյանի միջոցով վայրկյան մը սավառնեցավ սրահին մեջ: Կոմիտաս վարդապետի այդ դյուցազներգական եւ արհավիրալից երգը Շահ-Մուրադյանը երգեց այնքան հոգիով եւ այնքան արվեստով, որ ներկաները, վայրկյան մը մոռացած ամեն ինչ, կտրված արտաքին աշխարհեն, ապրեցան հուզումի գեղարվեստական պահեր:

Հակառակ տարիներու բեռին, Շահ-Մուրադյանը կպահե միշտ նույն հզոր եւ գոռ ձայնը, որ տարիներ ի վեր հնչեց ու պիտի հնչե տակավին, ապրեցնելով հայ երգը:

Մեշատրա

(Փարիզի «Երեւան» թերթի թղթակից, 1927թ. թիվ 306, էջ 2)

Խաչիկ ՍԱՖԱՐՅԱՆ



Լիպարիտ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՆԳՍՏՅԱՆ ՑԱՆԿՈՒԹ ...

[illegible]

Քո կորուստները անչափ ու անանց,
Քո կյանքը մի մե՜ծ, անվե՜րջ տառապանք,
Երկրաշարժն ահեղ՝ վայրկյաններ տեւած,
Քո հոգին ցնցեց մի ողջ տասնամյակ ...

Կորցրած տուն-տեղ, հարս ու թոռնիկներ,
Կորցրած միակ որդուդ թանկագին,
Աղոթում էիր Արարիչին դեռ,
Օգնություն խնդրում նրանից կրկին:

Դու քո մեջ նորից գտար ուժ ու կամք՝
Կրտսեր դստերդ փարվելու դարձյալ,
Որ հոր երեսը չէր տեսել անգամ
Եվ նրա համար հայր էիր ու մայր ...

Սեւդ ներս արած՝ ժպտացիր նրան,
Որ կուլ չգնա ահավոր վշտին,
Հոգիդ դարձրիր արցունքաղարան,
Խոսքեր ասացիր հույսի՜, հավատի՜ ...

Կորուստներդ շատ էին տանջում քեզ՝
Գիշեր ու ցերեկ մորմոքում կանչով.
Թանկ զավակներից հասա՞ր վերջապես,
Հանգստացա՞ն, քույր, ցավերդ տանջող ...

© National Library of Armenia

ԳՅՈՒՄՐԻԿՅԻ

ԳՅՈՒՄՐԵՑՈՒ ԿՈՄՊՐԵՍԸ

Մի անգամ մի գյումրեցու մեջքը ցավում է, գյումրեցին գնում է բժշկի մոտ, ասում է.

- Դուրքանա էղնիմ, բժիշկ, ճարըմ էրա:

Բժիշկը մանրամասն հարցուփորձ է անում, հիվանդին քննում է, դեղատոմս է գրում, տալիս հիվանդին ու պատվիրում.

- Էղիկ կառնիս, կքրքես, մեջքիդ կկպցնես, վրեն էլ տաք կոմպրես կընես, կանցնի:

Հիվանդ գյումրեցին ուղիղ տուն է գնում, դեղատոմսը կնոջը տալիս ու ասում.

- Ռեցեպտը քրքե, դիր մեջքիս, վրեն էլ կոմպրես էրա, բժիշկը ըսավ:

Կինն ամեն ինչ տեղը տեղին անում է, հաջորդ օրը հիվանդը ողջ-առողջ վեր է կենում, մի շիշ օղի վերցնում, գնում բժշկի մոտ: Մտնում է բժշկի առանձնասենյակը, ասում է.

- Բժիշկ ջան, ձեռագրիդ դուրքան էղնիմ, ինչըդ ձեռագիր էր, որ բուքքուն (բոլոր) ցավերս անցան: Էս բուքուլկեն էլ քեզի փեշքեշ էղնի:

ԱՇԽԱՐՀՈՒՄ ՔԱՆԻ ՔԱՂԱՔ ԿԱ

Մի անգամ մի գյումրեցի գնում է գյուղ իր սանահորն այցելության: Հարեւան-բարեկամ հավաքվում են, որ քավորին տեսնեն: Այս գյուղացի մի երիտասարդ էլ, որ Ամերիկայից նոր վերադարձած է լինում, նույնպես գնում է համագյուղացու տուն եւ, օտար հյուրին տեսնելով, մոտենում է, բարեւում ու հարցնում է.

- Որտեղացի՞ ես, ախպեր ջան:

- Քաղքցի,- պատասխանում է հյուրը:

- Ո՞ր քաղքեն:

- Իյա՛, ա՛յ օղուլ, աշխարք քանի՞ քաղաք կա,- զարմանում է հյուրը,- չիտե՞ս, որ ըշտը գյումրեցի եմ:

ՓՉԱՆ ԱԼԵՔԸ

Մի անգամ մի գյումրեցի նշանավոր հնարագետ ու սրախոս ծամրչի (դարբին) փչան Ալեքը, հարեւաններին գլխին հավաքած, պատմում էր.

- Գնացինք սելով Մուղնի այխտ, օխտը օր մնացինք: Էտ այլերու տեսանք մեր երիկը մերմակել է ձնի պես: Դու մի ըսե մեր հավերն էին ձու ածե: Կերուցի քթոցները, դարսեցի, եղավ տասներկու հազար հատ... Լսողներն ասացին.

- Ալեք, մե քիչըմ իջի:

- Սատկեք էլ չեմ իջնի, ես իմ ձեռքով եմ համրել:

ՀԱՆԳՈՒՑՅԱԼԸ ՓՈՍՑԱԾ՞Ր Է

Գյումրեցի Զաքինենց Ավոյի հայրը մեռնում է: Տանում են թաղելու: Հանգուցյալի հարազատները, հարեւանները, ընկերները հավաքվում են գերեզմանատանը: Մեռնողի ծեր ընկերներից մեկը ասում է.

- Գնա, մեզնեն բարեւ տար:

Մի ուրիշն էլ ասում է.

- Ինձնեն բարեւ տար հարազատներուս:

- Մի երրորդն էլ ասում է.

- Գնա՛ ըսա, օր մենք էլ շուտով գուքանք:

Զայրացած Ավոն էլ չի թողնում, որ մյուսները շարունակեն.

- Հերիք է, ես ձեր հոր հոգին, հեսա ձեզի համար խո փոշթալիոն չեղա՞վ:

ՈՐՔԱՆ Է ԿՇՌՈՒՄ ՊՈՂՈՍ ԱՆՈՒՆԸ

Մի անգամ գյումրեցի փայտոնչի Սարի Մանուկը իր կառքով մի մարդ էր տանում: Ձիերը, զառիվերը բարձրանալով, բարձունքի վրա հանկարծ կանգ առան ու էլ ոչ դես, ոչ դեն, տեղից չեն շարժվում: Սարի Մանուկը դառնում է նստածին.

- Անունդ ի՞նչ է:

- Անունս Պողոս է:

- Տո՛, Պողոս էլ անու՞ն էղնի, անունդ վեց փութ կքաշե... Իջի, իջի փայտոնից, ես էլ կըսեմ ձիաները ինչի՞ չեն էրթա:

Պողոսը իջնում է փայտոնից ու ոտքով ճանապարհ ընկնում: Ձիերը, մի քիչ հանգստանալուց հետո, նույնպես ճանապարհվում են: Սարի Մանուկը փայտոնից իջեցրածին կանչում է.

- Արի՛, արի՛, նստի, էսօր էլ Պողոս տանինք:



ՇԻՐԱԿԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

19-րդ դարում Գյումրին փոքրիկ գավառական քաղաք էր, որի բնակչության մեծ մասը արհեստավորներ էին: Գյումրին հռչակված էր հատկապես իր «լոթիներով», որոնք մի առանձնահատուկ հմայք էին հաղորդում քաղաքի բնակչության կյանքին: «Լոթի» անվանումը գյումրեցիների բառապաշարում դրական նշանակություն ուներ: Լոթիները համարձակ, ուստա-խմող, ավանդական հագուկապով տղամարդիկ էին, որոնք աչքի էին ընկնում իրենց հայրենասիրությամբ, կատակասիրությամբ, սրամտությամբ, մարդուն ձեռք առնելու ունակությամբ, դեպի երգն ու երաժշտությունն ունեցած սիրով, բամբասանք սրամտություններով ու հայհոյանքներով: Լոթիների չոնդալից քեֆերը ուղեկցվում էին երգ- երաժշտությամբ, բազմաթիվ հյութեղ բաժակաճառերով, թեւավոր խոսքերով ու դարձվածներով: Արհեստավորների, լոթիների ու բազմաշերտ գյումրեցիների միջավայրում ծնվում ու ձեւավորվում էին Գյումրիի նշանավոր զվարճախոսներն ու կատակաբաններն, որոնք անհատականություններ էին ու հռչակ էին վայելում: Սակայն յուրաքանչյուր գյումրեցի իր մեջ խտացնում էր Գյումրիի բոլոր առանձնահատկությունները: Յուրաքանչյուր գյումրեցի Գյումրիի հարազատ զավակն ու տիպիկ ներկայացուցիչն էր, եւ այդ պարագայում գյումրեցին հանդես էր գալիս արդեն որպես զվարճախոսության հավաքական կերպար:

Գյումրեցիները շատ էին սիրում ու հպարտանում իրենց քաղաքով: Քաղաք ասելով՝ հասկանում էին Գյումրին: Եվ ինչպես հավաստում է նշանավոր բանահավաք Պարույր Բարսեղյանը, մի ծեր գյումրեցի իր սիրելի քաղաքը գնահատել է այսպես. «Աստծու տաֆթարի մեջն էլ գրված է, բիլա, օր Գյումրին անուշ քաղաք է»:

Գյումրին զվարճախոսության հայրենիքն ու զվարճախոսության չսեմարանն է, իսկ գյումրեցիները ողջ աշխարհում հռչակված զվարճախոսներ են:

Էսթեր ԽեՄՉՅԱՆ

ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ, բանագետ

ԵՐԲ ԴՈՒՌԸ ԿԻՍԱԲԱՑ ԿՄՆԱ

Մի գյումրեցի հյուսն մի անգամ մի ուրիշ գյումրեցու տան համար դուռ է շինում, բայց դուռն այնքան անհաջող է պատրաստված լինում, որ պատվիրատուն հյուսնի վարձը չի վճարում: Հյուսնը պատվիրատուին դատի է տալիս: Դատարանում դատավորը դիմում է հյուսնին եւ պատվիրում գործը ներկայացնել: Հյուսնը պատմում է.

- Քաղաքացի դատավոր, փետը քաց, վակզալեն (կայարան) գողցած, ուստին մենակ պանիր-հաց, յըլըքը դուռը կմնա կիսաբաց:

Դատավորը գործը որոշում է հյուսնի օգտին:

ՏՈՒԳԱՆՔ

Մի գյումրեցի կնոջ հետ, հրավիրված է լինում հարսանիքի եւ ուշացած է հասնում հարսանքատուն: Թամադան ասում է.

- Միսյեր ջան, առ տուգանք խմի:

Հրավիրվածը խմում է: Այդ ժամանակ հյուրերից մեկն էլ ասում է.

- Միսյեր ջան, իմ կնանցս խմել են, առ դու էլ խմե իմ կնանցը:

Դրա կնանցն էլ է խմում: Այսպես, ոտքի վրա, անոթի փորին խեղճը ութ-ինը բաժակ կոնյակ է խմում, հարբում ու դիմում է կնոջը:

- Ծո՛, կնիկ, քելի էրթանք տուն, հարսանիքը պրծավ:

Կինը հարբած ամուսնուն տանում է ավտոբուսի կանգառ, եւ առջեւի դռնից բարձրանում են ավտոբուս: Հսկող միլիցիոներն ասում է.

- Ընկեր, կարգ խանգարեցիր, տուգանք:

Գյումրեցին ասում է.

- Ծո՛ լից, հերն անիծած, ինը հատ խմել եմ, մեկն էլ կխմեմ:

«Կանչի» թիվ 9- ում սխալներ է հայտնաբերել *Զարուհի ՄԽԻԿՅԱՆԸ* (Երեւան):

Հայտնաբերած 6 սխալի համար նա պարգեւատրվել է 600 (6 x 100)դրամով :

Հոդվածի անվանումը	Տպված է	Պետք է լիներ
1.ԱՐՑԱԽԸ ՏՈՆԵՑ ԻՐ ՄԵԾ ՊԱՅՔԱՐԻ 10- ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ	- Այնուհետեւ պարոն Ղուկասյանը ԼՂՀ բարձր պարգեւներով **պարգեւատրվեց** մի խումբ նշանավոր գործիչների:	- Այնուհետեւ պարոն Ղուկասյանը ԼՂՀ բարձր պարգեւներով **պարգեւատրեց** մի խումբ նշանավոր գործիչների:
2. — — — — — — — — —	Անցկացվեցին **մշակույթային**, մարզական միջոցառումներ եւ այլն:	Անցկացվեցին **մշակութային**, մարզական միջոցառումներ եւ այլն:
3.ԵՐԵՔ ՀԱՐՑ ՀՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ	Նախարարը տեղեկացրեց,որ ինչպես ինքը խոստացել էր, ՀՀ կրթության մասին օրենքը 1997 թ. դեկտեմբերին **նախարարությանը** հանձնել է **կառավարությանն** եւ այլն:	Նախարարը տեղեկացրեց, որ, ինչպես ինքը խոստացել էր, ՀՀ կրթության մասին օրենքը 1997 թ. դեկտեմբերին **նախարարությունը** հանձնել է **կառավարության** եւ այլն:
4. ՀԱՄԵՐԳԱՍՐԱՀ	**Վարդավառին** դեպի Չարբնդաղ սարը ձգվող երկու ճանապարհներից մեկի վրա ցուցախնում են Լորուտի, Մարցի, Քարինջի սարվորները, մյուսի վրա՝ **Ակների- Սանահինի** սարվորները:	**Վարդավառին** դեպի Չարբնդաղ սարը ձգվող երկու ճանապարհներից մեկի վրա ուրախանում են Լորուտի, Մարցի, Քարինջի սարվորները, մյուսի վրա՝ **Ակների, Սանահինի** սարվորները:
5.ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԳՐՔԵՐ	Քանի որ այս տարվա հունվարին ստեղծվել եւ այլն...	Քանի որ այս տարի հունվարին **է** ստեղծվել եւ այլն...
6.ՈՐՏԵ՞Ղ ԷԻՐ ,ՄԱՐԴ ԱՍՏԾՈ	Թուրքերի դեմ կռվում էր մեծ քաջությամբ եւ թշնամու ու սարսափն էր:	Թուրքերի դեմ եւ այլն, ապա կամ ու-ն է ավելորդ, կամ պետք է լիներ՝ թշնամու **ահ** ու սարսափն էր:

© National Library of Armenia

Միրեկի «Կանչ»,

Ուղարկում եմ Արցախյան գոյամարտի մանուկ հերոս Արտակ Բեգլարյանի բանաստեղծությունները (լուսանկարի հետ միասին): Տղան ականի պայթյունից կորցրել է տեսողությունը եւ աշխարհը ուզում է տեսնել իր բանաստեղծական թարթիչներով:

Կուզենայի այդ հերոսություն երեխայի մի քանի գործ տպագրված տեսնել: Նա գրում է, երգում եւ հորինում նույնիսկ երգեր, իրեն նախապատրաստում է գրականական ասպարեզին, ցույց նաեւ ավելի մեծ ապագայի:

Ես համոզված եմ նրան ու նաեւ քեզ, որ ինձ հուսախաբ չես անի: Արտակը սովորում է Երեւանի կույր եւ թույլ տեսնող երեխաների գիշերօթիկ դպրոցի 3-րդ դասարանում: Արցախյան գոյամարտի նահատակի որդի է:

Միշտ քո՝ Գուրգեն ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԱՐՏԱԿ ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՀՈՂԻՆ ՄԵՌՆԵՄ

Ղարաբաղի
Հողին մեռնեմ,
Ղարաբաղի
Ցողին մեռնեմ:

Օջախները
Միշտ վառ պահող
Նրա հուր ու
Ճողին մեռնեմ:

ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՐԳ

Ժողովուրդ իմ անգին,
Խոցված է սիրտդ խոր,
Իմ սիրտն էլ քոնի պես
Խոցված է ամեն օր:

Թե ամեն մեկս մեր
Բաժինը տանք Հողին...
Ժամ առաջ կհաղթենք
Մեր դաժան ոսոխին:

ԺԱՄԱՆԱԿ

Կես,
Կես,
Տասի կես...
Ու՞ր ես թռչում
Դու այդպես...

Խոսում եմ ես
Ա՛յ այսպես...
Որ ճիշտ լինեմ
Միշտ քեզ պես:



ԳՈՒՐԳԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԱՐՏԱԿ

Միմիայն բանաստեղծ քարեկամիս, որ դավադիր ականի պայթյունից այսօր զրկված է ամենաթանկից՝ տեսողությունից

Այս աշխարհում,
Այս երկնի տակ,
Քեզ պես տղա
Չկա, Արտակ:-

Որ քո սրտի
Ցավն ունենա,
Բայց եւ ցավին
Լավ դիմանա:

Աչքի լույսը
Աշխարհում այս
Ամենաթանկ
Գանձն է անհաս...

Իսկ դու չունես
Այդ գանձը բնավ,
Բայց ապրում ես
Վեհ ու հպարտ:

Դիմանում ես
Դու լիահույս,
Սրտդ դարձրած
Աչքերի լույս...

Տոկա այդպես,
Իմ քաջ Արտակ,
Ցավի հանդեպ
Վեհ ու անպարտ:

ՄԱՏԻՏԸ

Մատիտ եմ, մատիտ եմ,
Բայց շատ վտիտ եմ:
Ասե՞մ, թե ու՞մ պատճառով.
Այն սրիկի ...
- Այո, սուտ չի,-
Ասաց սրիկն ու գնաց:
Իսկ մատիտը մենակ մնաց:
Ուզեց փորձել նա նկարել,
Սկսեց քիչ-քիչ տկարել:
Նկարեց նա սրիկին,
Այն անպիտան փորիկին:
Հոգնած մատիտը հառաչեց
Ու վերջին շունչն իր փչեց:

ԾԵՐ ՊԱՊԸ

Պապս բակում աշխատում,
Փոս է փորում,
Ծառ տնկում:
Ու ջրում է զով այգին,
Ինչքա՜ն լավն է իմ պապին:
Իսկ հիմա պապս անգին,
Ծերացել է ահագին:
Հիմա ոչ փոս է փորում,
Հիմա ոչ ծառ է տնկում,
Ոչ էլ այգին է ջրում:
Հիմա նստած զով այգում
Իր անցյալն է մտորում:

ՄԱՐՏԸ

Եկավ լացկան մարտը,
Սկսվեց արեւի ու անձրեւի ճակատամարտը:
Անձրեւն ասաց.
- Պետք է լինի երկինք ամպոտ,
Պետք է լինի սեւ առավոտ:
Արեւն ասաց.
- Այ անօրեն,

ՌԱՖԱՅԵԼ ԱՌԱՄՅԱՆ

Երեւան, 9 տարեկան

Ո՞նց կլինի սեւ առավոտ:
Պետք է լինի օր արեւոտ,
Առավոտ եւ մաքուր օդ:
Անձրեւն այդ որ լսեց,
Բուք ու բորան հյուր կանչեց:
Անձրեւ տեղաց, քամի փչեց,

Ամպը գոչեց,
Իսկ արեւը հառաչեց:
Նա էլ կանչեց իր շողերին:
Շողը ընկավ ամպի վրա,
Ամպը հալվեց կորավ-գնաց:
Նորից՝ անձրեւ,
Նորից՝ արեւ...
Սխր էլ ի՞նչ մարտ առանց ճակատամարտ:

ՔԱՄԻ

Քամի- քամի, դու գնա,
Թող աշխարհը հանգիստ մնա:
Թե չէ դու հա փչում ես,
Խեղճ ծառերը փչացնում ես:
- Տեսեք, տեսեք, անպիտանը,
Քշում- տանում է իմ վրանը:
Ի՞նչ ես անում, ինչի՞ համար,
Այ դու անխելք քամի հիմար,
Ի՞նչ է անցել քո մտքով,
Գոնե փչիր մի քիչ խոնավ:

ԱՊՐԻԼԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՐ ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔՆ Է ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ՅՈՀԱՆՆԵՍ ԼԵՓՍԻՈՒՍԻՆ

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը որոշում է ընդունել 1998 թվականին Երեւանում նշել հայ ժողովրդի մեծ բարեկամ Յոհաննես Լեփսիուսի (1858- 1926 թ.թ.) ծննդյան 140- ամյակը, եւ այդ կապակցությամբ ստեղծվել է հանդիսությունների անցկացման հանձնաժողով:

- Նախատեսվում է ապրիլի 22- ին Երեւանում հրավիրել միջազգային գիտաժողով՝ հայ եւ արտասահմանցի գիտնականների մասնակցությամբ,- բոլորակցին ասաց հանձնաժողովի նախագահի տեղակալ, Հայոց ցեղասպանության թանգարան- ինստիտուտի տնօրեն Լավրենտի Բարսեղյանը:- Հաջորդ օրը Ծիծեռնակաբերդում՝ Հայոց ցեղասպանության թանգարանում, տեղի կունենա Լեփսիուսի արխիվում պահվող նյութերի կրկնօրինակները եւ դրանց գիտական նկարագրման ցուցակները թանգարանին ի պահ տալու արարողությունը: Դրա շարունակությունը կկազմեն Մեծ եղեռնի հուշարձանախմբի մեջ մտնող պատին հուշատախտակ փակցնելը եւ հուշապատի մեջ Իտալիայի Միրանո քաղաքում գտնվող՝ Լեփսիուսի գերեզմանից վերցված մի բուռ հող պարունակող սափորի ամփոփումը:

Նախատեսվում է Երեւանի փողոցներից մեկին տալ Լեփսիուսի անունը: Հանդիսությունների օրերին ընթերցողները կստանան գիտնականի աշխատություններից մեկի հայերեն հրատարակությունը եւ նրա կյանքին ու գործունեությանը նվիրված մի գրքույկ:

Գերմանացի հասարակական գործիչ, աստվածաբանության դոկտոր Յոհաննես Լեփսիուսը 1996թ. շրջագայել Փոքր Ասիայում, հավաքել է 1894- 1896 թվականների հայկական ջարդերի ականատեսների վկայություններ եւ փորձել օգնություն ցույց տալ հայերին: 1896- ին գերմանական մամուլն սկսել է տպագրել նրա « Ճշմարտությունը Հայաստանի մասին» հոդվածաշարը, որը հետագայում դարձավ նրա հրատարակած « Հայաստանը եւ Եվրոպան» աշխատության հիմքը: Երկու տարում այդ գիրքը յոթ անգամ հրատարակվել է գերմաներեն, անգլերեն եւ ֆրանսերեն ու զգալի դեր խաղացել միջազգային հանրության հայերին ի նպաստ կարծիք ստեղծելու գործում:

1915 թվականի հուլիսին, երբ լայն ճակատներով թուրքերն իրականացնում էին հայերի ջարդերն ու տեղահանությունը,Լեփսիուսը հանդիպել է Էնվերին, պահանջել, որ դադարեցվի ցեղասպանությունը: Մեկ տարի անց հրատարակվել է նրա« Տեղեկագիր Թուրքիայում հայ ժողովրդի կացության մասին» գիրքը, որը 1919 թվականին վերահրատարակվել է « Հայ ժողովրդի մահը» վերնագրով: Նույն թվականին նա հրատարակել է «Գերմանիան եւ Հայաստանը 1914- 1918- ին» փաստաթղթերի ժողովածուն:

1921 թվականին Յոհաննես Լեփսիուսը երիտթուրքերին մերկացնող ճառով հանդես է եկել Սողոմոն Թեհլերյանի դատավարության ժամանակ:

Վաճիկ ՍԱՆԹՐՅԱՆ

ՆՎԱՐԴ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Երեւան, Պ. Սեւակի անվան դպրոց, 8-րդ դասարան

***

Անցավ, հեռացա՞վ գունատ աղջիկը
Աշունը տխուր ու մելամաղձոտ,
Որ միշտ նստում էր ոսկեղեն այգում
Ու նայում հեռուն աչքերով թախծոտ:

Այցելեց ձմեռն իր սառցե կառքով,
Այնտեղից իջավ իշխանը սպիտակ,
Ու երբ տարածեց թեւերը հեռուն,
Շուրջը փռվեցին երազներ ճերմակ:

Եվ փաթիլները, ինչպես հասմիկներ,
Թափվեցին ներքեւ՝ հանդարտ պարելով,
Խենթ քամին նրան մեղմ փաղաքշեց
Ձեռմ համբույրների հետքեր թողնելով:

***

Ոչ, խաբու՞մ է ինձ գարունը կրկին,
Էլետ չի բերի ջինջ մանկությունս,
Էլ չի նվիրի ինձ խաղալիքներ,
Հեքիաթնե՞ր լուսե, ոսկե անուրջնե՞ր...

Պայծառ չէ գարունն առաջվա նման,
Ու հոտավետ չեն ծաղիկներն անուշ,
Արեւը մոր պես չի ժպտում էլ ինձ,
Եվ բարդին էլ չի սոսափում քնքուշ:

Երբ քայլում եմ իմ կանաչ պարտեզում,
Ծաղիկներն անգամ չեն խոսում ինձ հետ,
Չեն փարվում էլ ինձ, ինձ չեն ճանաչում
Եվ կարծում են, թե կորել եմ անհետ:

Ինչու՞ հեռացար, անհո՛գ մանկություն,
Տարար մանկական ժպիտներն անբիծ,
Չարություններն ու արցունքներն անմեղ,
Որոնք գուցե էլ չեն այցելի ինձ ...

© National Library of Armenia

ՀՈՎՍԵՓ ԳԵՂԵՑԻԿ

ԿԱՄ

ԻՆՉՊԵՍ ԴԻՄԱԳՐԱՎԵԼ ՑԱՎՆ ՈՒ ԴԺԲԱԽՏՈՒԹՅՈՒՆԸ

(Դրամատիզացիա՝ երեք գործողությամբ և 11 պատկերով)

ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԿԵՐ ՈՒԹԵՐՈՐԴ

Նույնը, ինչ հինգերորդ պատկերում: Բանտային ընդարձակ խցիկը՝ համեմատաբար հարմարավետ: Չորս մահճակալ: Ռուբենը, Շմավոնը, Ղևոնդը, Իսաքարը նստած են մահճակալին և աթոռներին: Անցել է երեք օր:

ԻՍԱՔԱՐ.- *Այս ինչ փորձանքի մեջ ընկանք:*

ՇՄԱՎՈՆ (խփելով Իսաքարին).- *Էշի գլուխ, քո ի՞նչ բանն էր խոսելը: Պե՞տք էր, որ այդ մարդուն ասեիր, որ մի կրտսեր եղբայր էլ ունենք:*

ԻՍԱՔԱՐ.- *Ես ասացի նրա սիրտը շահելու համար, որ խղճնա մեր հորը և կրտսեր եղբորը: Ի՞նչ իմանայի, որ նա այդպիսի պահանջ պիտի ներկայացնի:*

ՇՄԱՎՈՆ (նորից խփելով Իսաքարին).- *Ապուշ, անասուն...*

ՂԵՎՈՆԴ (պայմանականորեն թխկացնելով կողքի պատին).- *Դան ... Գադ ... Նեփթալի...* (Շարունակում է թխկացնել պայմանականորեն):

Նույն պատի կողմից պայմանականորեն հնչում են թխկոցներ:

ՌՈՒԲԵՆ (ազատ շունչ քաշելով).- *Մեր եղբայրները ողջ են, լավ է:*

ԻՍԱՔԱՐ (դադար).- *Այո, մեղավոր ենք Հովսեփի համար, որովհետև չխղճացինք նրան: Գուր էր խնդրում մեզանից: Իսկ մենք ականջ չէինք դնում նրա աղաչանքներին: Դրա համար էլ այս օրն ընկանք:*

ՌՈՒԲԵՆ.- *Ես չեմ չէ՞ ասում՝ մի մեղանչեք այդ երեխայի նկատմամբ: Դուք ինձ չլսեցիք: Եվ ահա նրա արյունը թափվեց մեր գլխին:*

ՇՄԱՎՈՆ.- *Թող այդ լակոտն իր երազներով մեր գահլան չտաներ: Թող իրեն համեստ պահեր, ինչպես վայել է կրտսեր եղբորը, մենք էլ չէինք*

չարչարացնեինք նրա վրա:

ՂԵՎՈՆԴ.- *Երեք օր է այստեղ ենք: Մեզ ինչքա՞ն պիտի պահեն:*

ԻՍԱՔԱՐ.- *Աստված գիտի, թե ինչքան...*

Ներս է մտնում Պետափրեսը, ինչպես և Քեսուն՝ ձեռքին շղթա:

ՔԵՍՈՒ (եղբայրներին).- *Մեր հզորագոր իշխան Փոտիփրոմանեն ասաց հետևյալը. «Կարարեք, ինչ որ ասում եմ, և դուք կապրեք, քանզի ես աստվածավախ եմ: Եթե դուք անկեղծ եք, ապա ձեր եղբայրներից մեկը թող մնա մեզ մոտ, բանտում: Իսկ մնացյալները թող ցորենը տանեն՝ իրենց ընտանիքներին կերակրելու: Եվ այստեղ բերեք ձեր կրտսեր եղբորը, որ ապրեք: Ապա թե ոչ կմեռնեք:*

ՊԵՏԱՓՐԵՍ (եղբայրներին).- *Ես ցորենը լցնել եմ տվել ձեր պարկերը և բարձել եմ տվել ձեր ավանակներին:*

ՔԵՍՈՒ (Շմավոնին շղթայելով).- *Դու կմնաս այստեղ:*

ՇՄԱՎՈՆ (բողոքվելով).- *Ինչու՞ ես ... ինչու՞ ես ... Ենք վիճակ գցենք:*

ՂԵՎՈՆԴ.- *Սակայն ի՞նչ տարբերություն...*

ՇՄԱՎՈՆ.- *Էհ, դու մնա իմ փոխարեն:*

ԻՍԱՔԱՐ.- *Դա մեծ պատիվ է քեզ համար, Շմավոն:*

ՇՄԱՎՈՆ (սպառնալով Իսաքարին).- *Ձենդ կտրիր, ավանակ:* (Մատնացույց անելով Իսաքարին՝ դիմում է Պետափրեսին և Քեսուին): *Սրան էլ մի լավ բաղչեք:*

ՀՈՎՍԵՓ.- *Յա՛, ինչի՞ որ...*

ՌՈՒԲԵՆ.- *Իսաքար, քեզ կարգին պահիր:*

ՊԵՏԱՓՐԵՍ (Քեսուին).- *Այս մի Իսաքարին էլ բանտում պահենք: Երկուսով չեն ձանձրանա:*

ՔԵՍՈՒ.- *Կարգադրված է մեկին ...* (Մատնացույց է անում Շմավոնին): *Այս մեկին:*

ՂԵՎՈՆԴ.- *Փոտիփրոմանեի այրին այսպուլա եա ևբևացել, Շմավոն:*

ՌՈՒԲԵՆ (գրկելով Շմավոնին).- *Մնաս բարով, Շմավոն: Մենք անպայման կվերադառնանք: Բենիամինին հետներս կբերենք, ու քեզ ազատ կարձակեն:*

ՂԵՎՈՆԴ (գրկելով Շմավոնին).- *Կարակը՝ կարակ, բայց համոզված եղիր, որ մենք քեզ չենք լքի: Քաջալերվիր, եղբայր իմ:*

ԻՍԱՔԱՐ (գրկելով Շմավոնին).- *Մենք քեզ համար բաժած մաժուն կբերենք, Շմավոն:*

ՇՄԱՎՈՆ (խփելով նրան).- *Կորիր աչքիցս, էշ, ավանակ:*

Բոլորը, բացի շղթայված Շմավոնից, դուրս են գնում:



Երվանդ Պետրոսյան

ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՉ՝ «ԿԱՆՉԻ» ԽՈՍԱՓՈՂՈՎ

Այս կանչը վերջին տարիներին մշտապես իմ մեջ է, իմ ականջներում, բայց ինձ թվում է՝ միայն իմ ձայնը չէ այնտեղ, այլ նաև՝ իմ գրող ընկերների, մանուկների ճակատագրով մտահոգ ամեն մի ծնողի, պատասխանատվության զգացում ունեցող ամեն մի մարդու և նաև իրենց՝ մանուկների ձայները:

Ինքնին հասկանալի է՝ սա օգնության կանչ է, որ կարելի է վերծանել ու բացել տարբեր խորություններով ու ընդգրկումներով, բայց ես կփորձեմ ներկայացնել սոսկ ընդհանուր գծերով:

Նախ և առաջ՝ մանուկները կտրվում են գրքից ու գրականությունից:

Թավական չէ, որ հազվադեպ, ցաք ու ցրիվ, ոչ միշտ են պետին ու մտքին որևէ բան տվող նոր գրքեր տպագրվում, դեռ եղածն էլ՝ տասնամյակներ առաջ տպագրվածները, ինչ-որ մարդկանց մատի մի շարժումով կարող են հանկարծ անհետանալ մեկեն. երբեմնի մարդաշատ ու աշխույժ գրախանութներն ու գրադարանները վերածվում են կազինոների, սրճարանների, առևտրի այլազան կետերի:

Հասկանալի է, փոխվել է հասարակարգը, առաջ են եկել տնտեսական նոր հարաբերություններ ու չահագրգռություններ, բայց մի՞թե դա ենթադրում է լրիվ անտերության մատնել մանուկների հոգևոր զարգացման կարևոր գործը, երեխաներին զրկել գեղեցիկի ու բարու հետ շփումից, կասեցնել նրանց երևակայության թռիչքը և ամեն ինչ հանգեցնել միայն շուկայական հարաբերություններին, էժան առնելու ու թանկ ծախելուն:

Անշուշտ, լավ է աղքատությունից, թշվառ վիճակից դուրս գալու ելքեր փնտրելն ու գտնելը, նյութական հարստության տեր դառնալու նպատակադրումն ու դրան հասնելը, բայց կուզենայինք զգուշացնել, որ գիր ու գրականությունից այսպես միանգամից ու համատարած կտրվելու բացասական հետևանքները, հոգևոր աղքատությունը չեն շրջանցի անգամ ամենահարուստների երեխաներին, որքան էլ նրանք շրջապատված լինեն շռայլ ճոխությամբ:

Գույներն ամենևին էլ չենք խտացնում. իսկապես տագնապալի իրավիճակ է, որի վաղվա օրը չի կարող հաճելի լինել ոչ մեկիս համար:

Եվ սոսկ բարի ցանկությամբ կամ անհատական գովելի նախաձեռնություններով դժվար է այս վիճակի դեմն առնելը: Ենթադրենք՝ մեկ կամ մի քանի բարեսիրտ մեծահարուստներ հովանավորեցին այս կամ այն հեղինակի այս կամ այն գրքի տպագրությունը (առանց ընտրության), կամ ինչ-որ գումար հատկացրին այս կամ այն օգտակար ձեռնարկին. դա կարո՞ղ է դրությունը շտկել, իհարկե՝ ոչ:

Այստեղ լայն ընդգրկումների աշխատանք է պետք, ծրագրված աշխատանք՝ նվիրված ու պատասխանատու մարդկանց ընդգրկումով, նրանց հովանավորելով, որ, կարծում ենք, կարող է իրագործել միայն պետությունը՝ չբացառելով միաժամանակ վերոհիշյալ բնույթի օգնությունները:

Թե չէ՝ ստացվում է, որ, ասենք, գրողը գրում է միայն իր համար: Եթե գրողի գրածը գրքով չի ներկայանում, չի կարող դառնալ ընթերցողների սեփական ունեցվածքը և, անկախ լավ ու վատից, չի կարող լայն արձագանք գտնել նրանց հոգիներում: Եվ բացն ու չորը, ինչպես ասում են, վառվում են մեկտեղ ու միասին: Այս պայմաններում ավելորդ է դառնում արդեն գրողների խրախուսման, նրանց նվիրվածությունն ու գործը հարգելու, գոյությունը պահպանելու և ստեղծագործական աշխատանքը շարունակելու նպատակով ինչ-որ կերպ նրանց վարձատրելու մասին մտածելը: Եվ ո՞վ պիտի մտածի: Գրում է՝ իր գործն է, չի գրի՝ դարձյալ իր գործն է:

Ես կուզենայի, ահա, որ գրողի ստեղծագործական աշխատանքը չդիտվեր այդպես՝ որպես միայն իր անձնական գործը, որ հոգատարություն ու հարգանք դրսևորվեր նրա կատարած գործի հանդեպ. մի բան, որ գրողին կարող էր ներշնչել առավել մեծ նվիրում և կազատեր նրան ավելորդ գործ կատարելու անցանկալի զգացումից:

Մանկական գրականությունը, ինչպես մի առիթով ասել եմ, մեր հոգևոր կառույցի հիմնաքարերից է, և նրա հաստատունության մասին պիտի հոգան ոչ միայն գրողները: Նրա բերած ու բերելիք նպաստի մասին չպետք



է դատել այսրոպեական շահով ու շահագրգռություններով:

Եվ, մեղմ ասած, ճիշտ չէ ամեն ինչի նայելը նորին մեծություն շուկայական հարաբերությունների տեսանկյունից:

Այս անմխիթար ֆոնի վրա ինչպե՞ս գովեստի ու խրախուսանքի խոսք չուղղեմ մանուկներին հասցեագրված թերթերին ու ամսագրերին՝ «Կանչին», «Ծիծեռնակին», «Աղբյուրին» ու նորածին «Պարտեզին», որոնց շուրջ համախմբված մի խումբ նվիրյալները դժվարին մեր օրերում ամեն ինչ անում են՝ ավելի բովանդակալից ու հետաքրքիր դարձնելու մեր փոքրիկների առօրյան: Բացի հետաքրքիր խաղերից ու սրամիտ նկարներից (ցավոք՝ ոչ միշտ գունավոր), հանրամատչելի զրույցներից ու տեղեկություններից, նրանք իրենց էջերը տրամադրում են մանկական բանաստեղծություններին ու պատմվածքներին ու այլ ժանրի գործերին՝ չմոռանալով տեղ տալ նաև փոքրիկ հեղինակների ուշագրավ գրական փորձերին:

Կուզենայի, որ նույնպիսի հետևողականություն, գրողների ու նրանց գործերի հանդեպ նոր մոտեցումներ ցուցաբերեին նաև հեռուստատեսության ու ռադիոյի համապատասխան բաժինները:

Գիտեմ, իհարկե, նրանց ներկա խղճուկ հնարավորությունները, բայց մի՞թե այդ հնարավորություններն ինչ-որ չափով մեծացնելու այլ ելք չկա, բան, ասենք, բռնելն ու միանգամից փակելը հեռուստատեսային «Բարի գիշեր» հաղորդաշարը, որի ուրախ զանգերին ու երաժշտությանը, զրույցներին ու մուլտֆիլմերին ամեն երեկո անհամբերությամբ էին սպասում տասնյակ հազարավոր երեխաներ: Այլ բան է, որ պետք էր մտածել այդ հաղորդումների որակը բարձրացնելու, նոր մոտեցումներ գտնելու մասին: Բայց ամեն հարցում առաջնորդվել միայն եկամտաբերության տեսանկյունից՝ ուռում, սակայն երեխաների համար չի կարող օգտակար լինել:

Եթե, ասենք, «Գործարար մարդիկ» հաղորդաշարը կարող է եկամուտ բերել ստուդիային, դա լավ է, բայց կարելի՞ է նույն ուղիներով մոտենալ նաև մանկական հաղորդումներին:

Ու եթե այս փոքրիկ թվացող հարցն անգամ կարող է պատճառ դառնալ հոգևոր կյանքի խաթարման, ի՞նչ ասել, ուրեմն, արվեստի ու գրականության վերաբերյալ, որոնց վիթխարի դերն ու նշանակությունն անտեսելն ու ճիշտ հունով չտանելը կարող է անհամեմատ ավելի վատ հետևանքների հանգեցնել:

Հուսանք, որ այս կանչն ինչ-որ չափով սրափեցնող խթան կհանդիսանա:

Թե՞ քաղաքական այս շիկացած մթնոլորտում այն կարող է չլսվել ոչ մեկի կողմից...

© National Library of Armenia



Բարդուղիմեոս Առաքյալի քարոզները եւ նրա նահատակությունը երկրում ի Հայս

(Սկիզբը՝ նախորդ համարում)

Առջեւում մի տխուր անհայտություն էր:

Ետեւում կատարված մի հսկա երեւութական գործ, որ կոչվում էր Քրիստոսի ուսմունքի տարածումը Հայոց կողմերում, որ այսպես մեծ չարչարանքով ու նվիրումով կատարեց Բարդուղիմեոս Առաքյալը:

Երբ նա ավարտել էր յուր գործը Պարսից եւ Հնդկացոց կողմերում, այնուհետեւ Ատրպատական գալով հատեց Երասխ գետը, մտավ Սիսական աշխարհ, որն էր Սյունիք, աստվածային ուսման քարոզն սկսեց Որդվատ գյուղից, որը հիմա Օրդուբադ է կոչվում «ժողովուրդների լենինյան բարեկամությամբ օրհնված եղբայրական Ադրբեջանի» տարածքում: Ապա անցել Արեւիք գավառ, Բաղք, Գողթն, հային հայ մկրտել սուրբ ավազանում, Գողթնի արեւմտյան ծայրամասում Տեառնընդառաջ աստվածանպաստ, աստվածահաճո եկեղեցի կառուցել, այնտեղ գործելով հրաշքներ մեծամեծ:

Այս ամենն անելուց հետո, որոնց թվում էր գավառի Շարի իշխանի, նրա որդի Խոսրովի, նրա թոռ-Վահանի, նրա կին Նշնայի մկրտությունը, ապա հրաշագործ մատուռի կառուցումը Վանանդ գյուղում, նա անցնում է Վայոց ձորով, բարձրանում սարերը, ապա իջնում դաշտն Արարատյան, որտեղ Արտաշատ մայրաքաղաքում նրան սպասում էր Թադեւոս Առաքյալը նա, որ Քրիստոսի հրամանով առաջինը եկավ ի երկիրս Հայս եւ առաջինը սկսեց տարածել Տիրոջ ուսմունքը:

...Սրբավայր Օթեաց Խաչ:

Սրբավայր, որ այսպես երկու դար անհայտ կմնար պատմությանը, եթե նա Սյունյաց հավատացյալներին հավատի բերած Աշակերտը Տիրոջ չարշավեր Վայոց ձորն ու չգար կենտրոնն այս Արարատյան դաշտի, որտեղից եթե ձեռք մեկնես կշոյես ձյուներն Արարատի, եթե վար իջեցնես այն կխառնես պղտոր կոհակները Երասխի:

Բայց հիմա խաղաղ է, թեթեւ քամին է միայն սվսվում դաշտն ի վար, դաշտն ի վեր, գնում, խառնվում Երասխի ափերին, իրիկնամուտի արեւը իր խուրձերն է հավաքում ջրերի հայելուց...

-Աստված օգնական, հայր սուրբ...

-Աստված օգնական: Բարի է իրիկունն այս:

Մտերմիկ, աստվածասեր հանդիպման մեխը Թադեւոս Առաքյալի բացատրանքն էր:

-Ավարտում եմ ես առաքելությունս երկրում այս Աստծո գործի շարունակությունը թողնելով քեզ:

Եկվորը Բարդուղիմեոս Առաքյալը, որ թամբը նոր էր վար բերել հոգնած ու քրտնած ձիու մեջքից ու կապերն արձակել երիվարի, հարց առաջադրեց:

-Այսուհետ ինչպե՞ս պիտի արշավեմ ճամփաս եւ ու՞ր:

-Ճամփադ պիտի տանի գավառը Գեղարքունյաց եւ ճամփեզրերի գյուղերն ընդհանրապես: Կոռ է ժողովուրդն այդ կողմերում շատ, տաք չեն, որովհետեւ նրանցում ամբարվել են սարերի խստությունն ու սառնությունը, բայց երբ նիրհը հաղթեն տաքարյուն են չափից ավելի: Գործ ունես երկարաշար ու հաղթահարելի: Սակայն այս մասին բավ է, հիմա սարկավագը մեզ ընթրիք կմատուցի, եւ դու կառնես գիշերահանգիստը, որպեսզի վաղ առավոտյան լավ տրամադրությամբ երիվարես: Առավոտյան ճամփա ընկնելուց հետո մի քանի հանձնարարականներ կտամ քեզ ում, ով, ինչպես, որտեղ: Բոլորը կասեմ: Իմ ճամփան ետադարձ է դեպի Վասպուրական. տեսնեմ չքնաղ ծովը Բզնունյաց, իսկ քեզ սպասում է ոչ պակաս գեղեցիկ ծովը Գեղարքունյաց: Լողալիս զգույշ եղիր, այդ ջուրը մի տեսակ ձգող երկաթ է, մարմինդ հատակ քաշելու սովորություն ունի:

Մնացածը շարունակում է պատմությունը: Գեղարքունիքից հետո սուրբ Բարդուղիմեոս Առաքյալը ճամփա է ընկնում դեպի Հեր եւ Զարեւանդ գավառներ, ապա Անձեւացյաց գավառ, որտեղ աստվածաշեն շատ հիշատակություններ է թողնում, մանավանդ անձեւացոց մոտ, որոնց հետագա իշխաններից մեկը, հանուն Գոհգոր Լուսավորչի, կռվել է Արձան քրմապետի դեմ, իսկ մեր այս պատմությանը տասը դար գումարելուց հետո գավառի եպիսկոպոս է կարգվել անձեռակերտ Գրիգոր Նարեկացու հայրը՝ Խոսրով Անձեւացին:

Սա հետո: Հիմա մենք դեռ առաջին դարի խարխափումների մեջ ենք եւ այս խարխափումների մեջ փորձում ենք պարզել Բարդուղիմեոս Առաքյալի մկրտությունների գործը, եւ ահա մտնում ենք Աղբակ, որն է գավառ Մեծ Հայքի Վասպուրական նահանգի:

Սա այն Աղբակն է, որտեղ սուրբ Առաքյալը տեսել է առաջին անգամ լույս երեսը Սանդուխտ՝ արքայադստեր, տեսել, սեր կապել ու կնության առել նրան: Հա, չմոռանանք, նաեւ քրիստոսացրել նրան ու, նրան օգնական առած, շրջել գյուղեր ու ավաններ, տարածել ուսմունքը Տիրոջ: Այստեղ էլ նա կառուցել է տվել Սուրբ Բարդուղիմեոսի մայրավանքը...

...-Կանգնել, ո՞վ է գալիս:

-Աստծո ճամփորդներ ենք մենք, Աստծո նվիրյալներ:

Զինվորները շրջանի մեջ առան նրանց:

-Մենք հրաման ունենք տեր թագավորից:

Տերենտիոս հազարապետը մեկ որոշեց ձեռքը տանել թրին, բայց արագ ետ քաշեց, որովհետեւ ուշ էր. այս զինվորները կարծես գետնի տակից ելան: Ճարպիկ զինվորները արագ զինաթափեցին նրան, ու երեք անպաշտպան մարդկանց առջեւ մեխվեց խիստ հրաման արձակած հարյուրապետը: Նա, իհարկե, ճանաչեց հրամանատարին, ըստ կարգի պիտի պատվի բոներ, սակայն գիտե, որ հազարապետն արդեն կոչումնազրկված էր, ուստի մի ծաղրալի հայացք նետեց նրան, անլուռ մի չար խինդ արձակեց:

-Դավաճան հարյուրապետ,- տեսնելով նրա լկտի պահվածքը գոչեց հազարապետը-Ստոր անասուն, Աստծուն ու հրամանատարիդ մատնում ես մի քանի արծաթի համար: Դժոխքն է տանելու քեզ, ու հազար չարչարանքը քիչ է լինելու քեզ համար:

-Ես զինվոր եմ, ես կատարում եմ հրամանը տեր թագավորի:

-Հրաման, որ մարդոց մատնես ի մահ. դա՞ է հրամանը,-ճչաց արքայադուստրը, որի ձեռքերը մեջքին են կապել սանձափոկերով-Ես արքայադուստր եմ, հարյուրապետ, եւ դու խախտում, ոտնահարում ես մարդու իրավունքները:

-Ի՞նչ մարդու իրավունքներ,-շնավարի քրքջաց հարյուրապետը-Հազար տարի հետո էլ, երկուհազար տարի հետո էլ թագավորներն ու իշխանները բարձր ամբիոններից խոսելու են մարդու իրավունքների մասին, իսկ ամբիոնները թողնելուց հետո թքելու իրենց իսկ ասածների վրա: Այո, թքելու, ինչպես ես եմ անում դա, ահա այսպես. թու, թու, թու: Այսպես է լինելու եւ հետո, գալիք բոլոր ժամանակներում, դուք դեռ հիտլերներ ու ստալիններ կտեսնեք ու նրանց հետնորդներին, որոնք կխոսեն մարդու իրավունքներից, բայց կկոտորեն այդ նույն մարդուն, իրենք կկուտակեն, կկուտակեն, կկուտակեն դրամ, ոսկի, արծաթ, ապարանքներ ու պալատներ կկառուցեն իմ, քո, նրա հաշվին, գողավարի հաշիվներ կբացեն արտասահմանյան անանուն բանկերում

եւ ամբիոններից աղի արցունքներ կթափեն ժողովրդի բարօրության համար, մարդու իրավունքների համար, ամբիոնից իջնելիս մի լումա կամ մի դրամ չեն տա այն մարդկանց, որոնց թշվառացրել են իրենց վարքուբարքով, խեղճացրել ու դարձրել ողորմելի: Եթե տեր թագավորը ձեզ մահ չբերի, դուք կտեսնեք, որ ձեր հետնորդների համար ձեր այդ Հիսուս Քրիստոսի ասածները օդ կրակած նետեր են միայն՝ անիմաստ, անհասցե, աննպատակ: Քարոզս այսքանով ավարտում եմ: Իսկ հիմա ես ձեզ պիտի վերադարձնեմ Նավասարդի խաղեր: Սանատրուկ թագավորն այնտեղ քեֆ է անում երկրային դիցուհիների հետ: Տա ձեր Տերը, որ տեր թագավորն այնտեղից ձեզ չուղարկի ձեր Տիրոջ գիրկը:

Եւ պատմությունն ավելացնում է.

Թագավորի ատյանի որոշմամբ Բարդուղիմեոս Առաքյալը նահատակվում է փշոտ քուքերի հարվածներից, Սանդուխտ դուստրը եւ Տերենտիոս զորավարը մահ են ստանում սրահարվածներից...

© National Library of Armenia

ՍԱՀՄԱՆՎԱԾ Է ՄՐՑԱՆԱԿ՝ 1000 ԴՐԱՄ

Կազմեց Վարդան ՄԵԼՅԱՆԸ

1. Հին հայկական տոմարի առաջին ամիսը: 2. Ձյան վրայով սահելու տախտակ: 3. Աստղերի լույս դիտավորության ասված խոսք կամ սրամիտ արարք: 4. Մաղթանքի արտահայտություն: 5. Միջնադարյան բուսաբան... 6. Սառույցի կամ ձյան վրայով սահելու հարմարանք: 7. Հրուշակեղեն: 8. Հայկական կերակրատեսակ: 9. Հայկական հեթանոսական տոմարի առաջին օրվա անվանումը: 10. Խմիչք: 11. Սաղմոնների ընտանիքի ձուկ: 12. Կիսայոր պատյանով կորիզապտուղ: 13. Առեւտրի վայր: 14. Բռված ցորեն, կանեփ, սիսեռ եւ այլն: 15. Մքնոլորտային տեղում:

Հարցերին պատասխանելուց հետո գծագրի շրջանակներում գտնվող երկանիշ եւ եռանիշ թվերը փոխարինեք համապատասխան տառերով (եռանիշ թվի՝ առաջին երկու, երկանիշ թվի առաջին նիշերը ցույց են տալիս բառաշղթայի հարցի համարը, իսկ վերջին նիշը՝ այդ հարցի պատասխանի համապատասխան տառը): Կկարդաք շատ սիրելի տոնի՝ տարբեր ժամանակների հայերեն հինգ անվանումները (կարդալ ժամացույցի սլաքի ուղղությամբ):

362.
Այս աշխարհի չորս ծագերում
Ում էլ հարցնես՝ կճանաչի:
Անվանի է, մարդ չէ, սակայն,
Ամենազոր է՝ Աստված չի:

363.
Թուղթ է, պղինձ է, արծաթ է,
Ամեն ինչի էլ հասրաթ է:
(Դրամ)

364.
Ինքը՝ պուճուր,
Ուժը՝ կտրուկ,
Մեկին՝ իշխան,
Մեկին՝ ստրուկ:

365.
Ինքը՝ պուճուր,
Ճնորհքը՝ մեծ,
Քարում նեցուկ,
Ագահին՝ ցեց:
(Ոսկի)

366.
Վերցնես՝ դժժում է,
Թողնես՝ լռում է:
(Շղթա)

367.
Վերցնում եմ՝ լափում է,
Թողնում եմ՝ մրափում է:
(Մանգաղ)

368.
Սվվալեն բանեց հովտում,
Պլպլալեն եռ եկավ տուն:
(Գերանդի)

369.
Իրենց մորից շատ առաջ են
Ձավակները աշխարհ գալիս:
(Քարգող. դեղ)

370.
Երկու ծայր, մի պոչ,
Մեկը բանում է, մյուսը՝ ոչ:
(Բլուրկ)

371.
Փոր ունի, բերան ունի,
Փչում էլ է,
Բայց շունչ չունի:
(Փուքար)

372.
Ատամ ունեմ,
Ատամ ունեմ,
Կծում-կտրում եմ ես էլ:
Ցարդված ատա՞մ, պատահում
է,
Ցավող ատա՞մ՝ չեմ տեսել:

373.
Ատամ ունի,
Կոկորդ չունի,
Ինքը կծում է՝ ուրիշն ուտում:
(Աղեղ)

374.
Փորով ուտում է,
Մեջքով դուրս թափում:
(Ռանգա)

375.
Երբ գողը տուն մտավ վախով,
Տունը պատուհանից փախավ:
(Ուսկան. գուր)

ՆԱԽՈՐԴ ՍՈՒՅԱԳՐԱՆՔԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ՉԿՆՈՐՍԸ ԵՒ ՀՆԱՐԱՄԻՏ ՏՂԱՆ

Տղան որպես լծակ եւ «կշեռք» օգտագործեց իր կարճի կոթը եւ թելը, որպես կշռաքար՝ կես լիտրանոց ամանի շշի ջուրը: Նա լավ գիտեր լծակի հավասարակշռության պայմանը, եւ նրան հայտնի էր, որ կես լիտր ջուրը կշռում է հինգ հարյուր գրամ:

Չկան կշիռը որոշելու համար Արմենը ամենից առաջ որոշեց լծակի ծանրության կենտրոնը եւ այդ տեղից կախեց այն: Լծակը գտնվում էր հորիզոնական դիրքում, հավասարակշռության վիճակում:

«Կշռաքար» պատրաստելու համար լծակի մի ծայրից կախեց ջրով լցված ամանի շիշը՝ մյուսից տոպրակով ավազը: Ճատացնելով եւ քչացնելով տոպրակի միջի ավազը լծակը հավասարակշռեց: Այնուհետեւ թափեց չչում եղած կես լիտր ջուրը եւ տոպրակից խնամքով հանեց ավազը եւ առանց թափելու լցրեց երկրորդ տոպրակի մեջ այնքան, որքան անհրաժեշտ էր լծակի հավասարակշռությունը վերականգնելու համար: Դրանից հետո երկրորդ տոպրակում հավաքած ավազի կշիռը հավասարվում է կես լիտր ծավալով ջրի կշռին, եւ այն ծառայում է որպես հինգ հարյուր գրամանոց «կշռաքար»:

Ի վերջո, տղան լծակի մի բազուկից թելով կախեց կես կիլոգրամանոց ավազը, մյուսից՝ ձուկը եւ վերջինը այնքան մոտեցրեց եւ հեռացրեց կախման կետին, մինչեւ որ լծակը հավասարակշռվեց: Նա ծալովի մետրով չափեց ավազի եւ ձկան կշիռների բազուկները եւ լծակի հավասարակշռության պայմանից հեշտությամբ որոշեց ձկան կշիռը, որը այնքան անգամ մեծ էր ավազի կշռից, որքան անգամ նրա բազուկը փոքր էր ավազի կշռի բազուկից:

ՆՈՐ ՍՈՒՅԱԳՐԱՆՔ

ՔԱՄԻՆ ԵՎ ՄԵՐ ԻՆՔՆԱԶԳԱՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Մեզ համար ինչքան հաճելի է ամառվա զեփյուռը, նույնքան տհաճ է աշնան կամ ձմռան սառը քամին: Քամու տակ մենք միշտ էլ զովանում կամ մրսում

ենք: Երբ փչում է սառը քամի, մենք պատսպարվում ենք նրանից: Դրսում մենք թաքնվում ենք քամու հոսքը փակող ծառի, խոտի դեզի, որեւէ շինության կամ արգելքի՝ քամու ուղղությանը հակադիր մասում: Բայց ինչու՞ է դա այդպես: Չէ՞ որ դրսում օդի ջերմաստիճանն ամենուրեք նույնն է, եւ ջերմաչափը քամու տակ եւ «թաքստոցում» նույն ցուցմունքն է ցույց տալիս:

Գարուշ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՍԱՀՄԱՆՎԱԾ Է ՄՐՑԱՆԱԿ



ՈՉ-ՈՔԻ:

ԱՍՈՒՄ, ԽՈՍՈՒՄ ԵՆ ՄԵԾԵՐԸ

Պատմողը մի անգամ հանդիմանում են, թե նա աղքատ է: Նա պատասխանում է.

- Մի՞թե ես պետք է ծղտեմ ձեռք բերել այն, ինչը խնամքով պահում են աղահությունն ու ժլատությունը, իսկ առատաձեռնությունն ու շռայլությունը վերջիվերջո ոչնչանում են:

Մի առիթով Ճիրազն ասել է.

«Իմ բաղձանք օրը կտեսնիս, այո, իմ բաղձանք օրը կտեսնիս, թե մեր ժողովուրդը ինչքան միասնական է. ...»:

ՄՐՑԱՆԱԿԸ՛Ր, ՄՐՑԱՆԱԿԸ՛Ր

«Կանչի» նախորդ համարում տպագրված ժամանցը ճիշտ է լուծել եւ 1000 դրամ մրցանակի է արժանացել Երեւանի թիվ 133 դպրոցի 10- րդ դասարանի աշակերտ Աշոտ ՂԱԶԱՐՅԱՆԸ:

ՊԱՏՎԵՐ 3021
ԱՄՍԻՉ 69122
ՄԵՐ ՀԱՍՑԵՆ՝ 375023, Երեւան - 23, Արշակունյաց պող., 2: Հեռախոսներ՝ Պարոցական գրականության եւ արվեստի բաժիններ 52-35-91, Գիտության եւ աշխատանքի, Նամակների եւ ծառայական աշխատանքների 52 - 49 - 84:
Տպ. 2 մամ.
ԳԻՆԸ՝ 50 ԴՐԱՄ
Թերթի հիմնադիրն ու հրատարակիչը «Կանչի» խմբագրությունն է: Հաշվի համարը 8117275: ՀՀ Հայէկոնոմբանկի Սպանդարյանի բաժանմունք: Գրանցման վկայական թիվ 178:
Տպաքանակ 3650:
Խմբագիր՝
ՀԱՄԱՅԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ
«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան

© National Library of Armenia